Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Անասնաբուծության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:
2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ նախարար) և գլխավոր քարտուղարի հրամաններով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:
4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են վարչության պետը, բաժինները:

ԻԻ.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Վարչության հիմնական նպատակն է՝

իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանը նպատակաուղղված հանրապետության անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտների զարգացման պետական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը:

6. Վարչության հիմնական խնդիրն է՝

աշխատանքի և միջոցների նվազագույն ծախսերի պայմաններում անասնագլխաքանակի և մթերատվության աճի հիման վրա անասնաբուծական, ձկնաբուծական և մեղվաբուծական բարձրորակ արտադրանքի արտադրության ծավալների ավելացման ապահովումը, ինչին նպաստում են տոհմասելեկցիոն համալիր աշխատանքների իրականացումը, գյուղատնտեսական կենդանիների և թռչունների գիտականորեն հիմնավորված նորմերով կերակրումը ու խնամքը, անասնաշենքերի տեխնիկապես հագեցվածության բարելավումը:

III.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչության գործառույթներն են.

1) հանրապետության անասնաբուծության առանձին ճյուղերի, այդ թվում՝ ձկնաբուծության և մեղվաբուծության իրավիճակի վերլուծություն ու առաջարկությունների ներկայացում, դրանց զարգացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների մշակում և իրականացմանն աջակցություն,

2) Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստում, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ապահովում,

3) անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն,

4) անասնաբուծությամբ, ձկնաբուծությամբ և մեղվաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին մասնագիտական խորհրդատվության տրամադրում,

5) գյուղատնտեսական կենդանիների բոնիտավորման և տոհմային հաշվառման գործընթացներին աջակցություն, գյուղատնտեսական կենդանիների տոհմա-սելիկցիոն աշխատանքների կազմակերպման կարգերի և ուղեցույցների մշակման ապահովում,

6) գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, սեռահասակային խմբերի օպերատիվ տվյալների հավաքագրում, գլխաքանակի շարժի վերլուծություն և ամփոփում, կուտակված կերերի ծավալների հիման վրա կոպիտ, հյութալի և խտացրած կերերի հաշվեկշիռների կազմում,

7) հանրապետությունում անասնաբուծական մթերքների և ձկան արտադրության ծավալների կանխատեսում, փաստացի տվյալների ամփոփում և վերլուծություն,

8) բնագավառներին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցություն,

9) ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկում ու իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումն ապահովող առաջարկությունների ներկայացում,

10) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցություն,

11) տեղական և արտասահմանյան պետական մարմիններում և կազմակերպություններում անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցություն,

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացում:

IV.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Գյուղատնտեսական կենդանիների բուծման,

2) Տոհմային գործի,

3) Ձկնաբուծության և մեղվաբուծության:

8. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների բուծման .

1) Եռամսյակային պարբերականությամբ հանրապետությունում անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների կանխատեսման, փաստացի տվյալների վերլուծությունների իրականացում, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե ներկայացվող տեղեկագրի կազմում,

2) հանրապետության անասնաբուծության առանձին ճյուղերի զարգացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների մշակում և իրականացմանն աջակցություն,

3) վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստում, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ապահովում,

4) անասնաբուծության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն,

5) գյուղատնտեսական կենդանիների և թռչունների բուծմամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին մասնագիտական խորհրդատվության տրամադրում,

6) բաժնի աշխատանքային ծրագրով նախատեսած միջոցառումների ապահովում,

7) գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, սեռահասակային խմբերի օպերատիվ տվյալների հավաքագրում, գլխաքանակի շարժի վերլուծություն և ամփոփում, կուտակված կերերի ծավալների հիման վրա կոպիտ, հյութալի և խտացրած կերերի հաշվեկշիռների կազմում,

8) այլ գերատեսչությունների կողմից մշակված անասնաբուծության առանձին ճուղերին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրություն:

10. Տոհմային գործի բաժին.

1) գյուղատնտեսական կենդանիների բոնիտավորման և տոհմային հաշվառման գործընթացներին աջակցություն, տոհմային կենդանիների բուծմամբ զբաղվող

տնտեսությունների ռեեստրի վարում,

2) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տոհմային անասնաբուծության միասնական քաղաքականության իրականացում,

3) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական կենդանիների տոհմա-սելիկցիոն աշխատանքների կազմակերպման կարգերի և ուղեցույցերի մշակում,

4) տոհմային կենդանիների և սելեկցիոն ձեռքբերումների վերաբերյալ տեղեկատվության ամփոփում և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ տվյալների փոխանակում,

5) վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստում, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ապահովում,

6) ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն, տոհմային անասնաբուծության համակարգված դիտարկումների և գիտատեխնիկական խնդիրների լուծման կազմակերպում և իրականացմանն աջակցություն,

7) գյուղատնտեսական կենդանիների բուծմամբ զբաղվող կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին տոհմային գործի կազմակերպմանն աջակցություն և մասնագիտական խորհրդատվության տրամադրում,

8) բնագավառներին առնչվող հարցերի վերաբերյալ միաջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցություն,

9) հանրապետության տոհմային կենդանիների և սելեկցիոն ձեռքբերումների զարգացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների մշակում և իրականացմանն աջակցություն,

10) այլ գերատեսչությունների կողմից մշակված տոհմային գործին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրություն:

11. Ձկնաբուծության և մեղվաբուծության բաժին.

1) ձկնաբուծության և մեղվաբուծության իրավիճակի վերլուծությունների իրականացում, խնդիրների վերհանում, գնահատում ու կանխատեսում և դրանց արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացում, զարգացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների մշակում և իրականացման ընթացքի ուսումնասիրություն,

2) վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթեր նախապատրաստում, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ապահովում,

3) ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում ձեռնարկատիրական գործունեության

զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն,

4) ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակում և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրություն,

5) ձկնաբուծությամբ և մեղվաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին մասնագիտական խորհրդատվության տրամադրում,

6) հանրապետությունում անասնաբուծական մթերքների և ձկան արտադրության ծավալների կանխատեսում, փաստացի տվյալների վերլուծություն և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե եռամսյակային պարբերականությամբ ամփոփ տեղեկագրի ներկայացում,

7) ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտների ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքելու և մշակելու նպատակով ուղեցույցների կազմման և մեթոդական աջակցության տրամադրում, դիտանցումներին մասնակցության ապահովում,

8) այլ գերատեսչությունների կողմից մշակված ձկնաբուծության և մեղվաբուծության բնագավառներին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրություն:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

14. Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիրազորությունների, շփումների և նեկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: